

«Հաղթահարելով երիտասարդ կանանց դեմ բռնությունը»

24-30 ապրիլ 2009թ., Թբիլիսի, Վրաստան

2009թ. ապրիլի 24-30-ը մենք՝ Նոնա Սիսակյանը և Արփինե Մաժինյանը, մասնակցեցին և ավարտեցին «Հաղթահարելով երիտասարդ կանանց դեմ բռնությունը» թրեյնինգ ծրագրի առաջին փուլը որպես ԲՀԶԿ-ի կամավորներ: Դասընթացը կազմակերպվել էր ENYA խմբի կողմից: Դրանք տեղի ունեցան Թբիլիսիում (Վրաստան): Այդ դասընթացին մասնակցեցին 18-30 տարեկան երիտասարդներ ավելի քան 10 երկրներից:



Դասընթացը մեզ հնարավորություն տվեց ներկայացնել Հայաստանում կանանց դեմ բռնության հիմնախնդիրը և ինֆորմացիա ստանալ մյուս երկրների վերաբերյալ: Մենք ստացանք նոր գիտելիքներ բռնության տիպերի մասին, տարբեր կազմակերպությունների փորձի և յուրաքանչյուր երկրի օրենսդրության մասին: Մենք կազմակերպում էինք խմբային քննարկումներ և փորձում էինք գտնել երիտասարդ կանանց դեմ բռնությունների կանխարգելման և լուծման ուղիները:



Բացի այդ մենք հնարավորություն ունեցանք անցկացնել մեկ օր Վրաստանի տեսարժան վայրերից մեկում և ծանոթանալ վրացական մշակույթի հետ:

Մյուս տարի տեղի կունենա դասընթացի երկրորդ փուլը, և մենք հուսով ենք, որ կարող ենք այնտեղ կրկին ներկայացնել ԲՀԶԿ-ն:

Արփինե Մաժինյանը